ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«14» մայիսի 2025թ. № 417

ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ 06-006-0165-0010 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀՈՂԱՄԱՍԻՑ ԱՌԱՆՁՆԱՑՎԱԾ 0,04000 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ԵՎ ԴՐԱ ՎՐԱ ԳՏՆՎՈՂ ՇԻՆՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ԱՆԱՀԻՏ ԱԼՄԱՐՏԻ ԳՐԻԳՈՐՅԱՆԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ, ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՀԱՏԱԿԱԳԻԾԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին կետով, «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, 59-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ, հաշվի առնելով, որ Անահիտ Ալմարտի Գրիգորյանի կողմից տիրապետվող՝ Սպիտակ համայնքի վարչական տարածքում գտնվող, 06-006-0165-0010 կադաստրային ծածկագրով բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասից առանձնացված հողամասի չափը կազմում է 0,04000 հեկտար, որը Անահիտ Ալմարտի Գրիգորյանին կարող է փոխանցվել անհատույց սեփականության իրավունքով, նշված հողամասը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 2-րդ, 3-րդ կետերով սահմանված պահանջներին, ընդգրկված չէ Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված սահմանափակումների ցանկում, հողամասի վրա 1992 թվականին կառուցված բնակելի տունը համապատասխանում է քաղաքաշինական նորմերին ու կանոններին, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, դրա պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, հիմք ընդունելով «Գասպար Վեքիլյան» Ա/Ձ-ի կողմից տրամադրված անշարժ գույքի չափագրման հաշվետվությունը, Կադաստրի կոմիտեում հասցեավորման

հայտի հաստատումը (քաղվածք 06011DHXAY9Y), «ՎԱՆԱՁՈՐԻ ՆԱԽԱԳԾՈՂ» ՍՊԸ-ի կողմից տրամադրված եզրակացությունը և Անահիտ Ալմարտի Գրիգորյանի դիմումը՝ ***որոշում եմ.***

1. Օրենքի ուժով ճանաչել Անահիտ Ալմարտի Գրիգորյանի (ծնված՝ 08.10.1958թ.) սեփականության իրավունքը Սպիտակ համայնքի վարչական տարածքում գտնվող, 06-006-0165-0010 կադաստրային ծածկագրով բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասից առանձնացված 0,04000 հեկտար մակերեսով հողամասի և դրա վրա կառուցված 48,7 քառակուսի մետր մակերեսով նկուղի, 2,95 քառակուսի մետր մակերեսով աստիճանահարթակի, 81,02 քառակուսի մետր մակերեսով բնակելի տան (1-ին հարկ), 6,78 քառակուսի մետր մակերեսով աստիճանահարթակի, 48,62 քառակուսի մետր մակերեսով բնակելի տան (2-րդ հարկ), 0,36 քառակուսի մետր մակերեսով բաց պատշգամբի նկատմամբ:

2. Հաստատել Սպիտակ համայնքի վարչական տարածքում գտնվող, 06-006-0165-0010 կադաստրային ծածկագրով հողամասից առանձնացված բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության 0,04000 հեկտար հողամասի հատակագիծը:

3. Անահիտ Ալմարտի Գրիգորյանի կողմից տիրապետվող 0,04000 հեկտար մակերեսով հողամասին, դրա վրա գտնվող 48,7 քառակուսի մետր մակերեսով նկուղին, 2,95 քառակուսի մետր մակերեսով աստիճանահարթակին, 81,02 քառակուսի մետր մակերեսով բնակելի տանը (1-ին հարկ), 6,78 քառակուսի մետր մակերեսով աստիճանահարթակին, 48,62 քառակուսի մետր մակերեսով բնակելի տանը (2-րդ հարկ), 0,36 քառակուսի մետր մակերեսով բաց պատշգամբին տրամադրել «Սպիտակ համայնք, Սպիտակ ք., ՈՒզբեկական Կ-9 թաղամաս, 6/2 բնակելի տուն» հասցեն:

4. Սույն որոշման կատարման հսկողությունը դնել Սպիտակի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության, գյուղատնտեսության, կոմունալ սպասարկման և տրանսպորտի բաժնի պետ Երեմ Գրիգորյանի վրա:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ _____ Ք.ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

2025թ. մայիսի 14
ք.Սպիտակ